Գյուղատնտես

ՓԵՏՐՎԱՐ 5 2014 Թ. ԹԻՎ 1 (2023)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Անցնող շաբաթների ընթացքում ՀՀ կառավարությունը հաստատել է 2014թ. գործունեության միջոցառումների և գերակա խնդիրների հիմնավորումները:

... Նիստում հավանության է արժանացել նաև «Ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին», «Շուկայի վերահսկողության մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենքների նախագծերի փաթեթը, որը համապատասխանում է եվրոպական չափանիշներին և միտված է շուկայի վերահսկողության իրավական և կազմակերպական հիմքերի, շուկայի վերահսկողության հարաբերությունների կարգավորմանը:

...Կառավարությունում հավանություն է տրվել «Համապատասխանության գնահատման մասին» օրենքում լրացում կատարելու օրենքի նախագծին, որի ընդունման դեպքում, վտանգավոր սննդամթերք հայտնաբերելիս, անմիջապես կկասեցվի դրա իրացումը:

...Կառավարությունը սահմանել է արտադրանքի համապատասխանության գնահատման համար կիրառվող գնահատման ընթացակարգերը, ՀՀ էկոնոմիկայի նախարարին և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին պարտավորեցրել՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո, ութ ամսվա ընթացքում, վերանայել պարենային և ոչ պարենային արտադրանքի անվտանգությունը սահմանող տեխնիկական կանոնակարգերը:

Ֆոտո ԳԱՀԿ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՅԾԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, Լոռու մարզ կատարած աշխատանքային այցի ընթացքում, այցելեց Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամի գյուղատնտեսական սպասարկման Լոռու մարզային կենտրոն:

Փոխվարչապետը, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ուղեկցությամբ, ծանոթացավ կենտրոնի աշխատանքներին, գործառույթներին, մատուցվող ծառայությունների ուղղություններին, զարգացման ծրագրերին: Քննարկվեցին նաև գյուղատնտեսության աջակցության ոլորտում հեռանկարային ծրագրերը, ինչպես նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) հետ որոշ ոլորտներում համագործակցության հնարավորությունները: Պատասխանատուները նշեցին, որ Գյուղատնտեսական սպասարկման կենտրոններ (ԳՍԿ) են գործում Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ ընդհանուր առմամբ, սպասարկելով շուրջ 15 հազար ֆերմերի:

2

ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Վերջերս, Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի օրհնությամբ պաշտոնապես բացվել են «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի» և Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» իրականացրած 5-ամյա ծրագրերը:

«Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» և «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրերը ֆինանսավորում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ):

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը նշեց, որ ծրագրերի մեկնարկը լուրջ ներդրում է Հայաստանի գյուղական համայնքների զարգացման գործում: Նրանց միջոցով գյուղերում զարգանալու է փոքր և

2

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն անցկացրել է տարվա առաջին աշխատանքային խորհրդակցությունը: Նախարարը կարևորել է 2014 թվականի համար նախատեսված ծրագրերի իրականացման ուղղությամբ տարեսկզբից կատարվող աշխատանքների արդյունավետությունն ու նպատակայնությունը:

Նոր տարվա գործունեության համար նա նշել է՝ աշխատանքային և կատարողական կարգապահության, աշխատանքի արդյունավետության հետևողական բարձրացումը, խնայողության ռեժիմը խստորեն պահպանելը: Այս առումով, հատկապես կարևորել է ամենօրյա գործնական վերահսկողության իրականացումը բյուջետային միջոցների նպատակային օգտագործման վրա, բաց ու թափանցիկ աշխատանքը ՋԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետ: Բարձրացված հարցերի և քաղաքացիներից ստացված բողոք-դիմումների օպերատիվ արձագանքումը, մարզերի և համայնքների հետ կապերի ընդլայնումը, մարզային այցելությունների ակտիվացումը:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ մասնակիցների ուշադրությունը նա հատկապես բևեռեց Կառավարության կողմից՝ ըստ ոլորտների, հաստատված գերակա խնդիրների հիման վրա բոլոր վարչություններում աշխատանքային ծրագրեր ունենալու և յուրաքանչյուր եռամսյակ վերջինիս կատարողականը քննարկման ներկայացնելու պահանջի վրա:

ՖՈՐՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը 2014 թվականի հունվարի 16-18-ը մասնակցել է Բեռլինում անցկացված Պարենի և գյուղատնտեսության համաշխարհային ֆորումին, որին ներկա են եղել աշխարհի 72 երկրների գյուղատնտեսության նախարարներ:

Ֆորումի մասնակիցներն անդրադարձել են զարգացող երկրների փոքր գյուղացիական տնտեսություններին ներդրումներով ապահովելու գործում գյուղատնտեսական կոոպերատիվների դերին, ինչպես նաև՝ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների նոր հնարավորությունների և մոտեցումների անհրաժեշտության հարցերին: Ընդունվել է համատեղ կոմյունիկե, որով կոչ է արվել միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու մարդկանց անվտանգ սնվելու իրավունքը և զարգացնել համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում՝ ազգային և միջազգային մակարդակներում: 2014 թվականը ՄԱԿ-ը հայտարարել է «Ընտանեկան ֆերմերային տնտեսությունների» տարի:

Նախարարը, ֆորումի շրջանակներում, հանդիպումներ է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Բեռլինում գտնվող մասնակից երկրների՝ Նիդերլանդների, Ավստրիայի, Էստոնիայի, Բուլղարիայի, Ուկրաինայի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Մոլդովայի, Կանադայի, Իրաքի և Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսության նախարարների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են միջպետական հարաբերությունների և գյուղատնտեսության ոլորտում համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր:

Նախարարը հանդիպել է նաև գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների արտադրությամբ մասնագիտացած «ԿԼԱԱՍ» գերմանական ընկերության ներկայացուցիչների հետ:

Ս. Կարապետյանը մասնակցել է «Բեռլինյան կանաչ շաբաթ» գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսի բացման արարողությանը: Մեր երկիրը մասնակցել է առանձին տաղավարով, ուր ներկայացվել են ՀՀ-ում արտադրվող կոնյակ, գինի, հյութեր և պարենային այլ ապրանքներ:

1

ԱՅԺԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Եւս մեկ ԳՍԿ շուտով կգործի Արարատի մարզի Դարակերտ համայնքում՝ այգեգործությամբ և ջերմոցային տնտեսությամբ զբաղվող ֆերմերների համար: ԳՍԿ-ների միջոցով մատուցվում են ինչպես անվճար, այնպես էլ վճարովի գյուղատնտեսական ծառայություններ, իրականացվում է խորհրդատվություն: Այդ նպատակով CARD հիմնադրամը նախատեսում է կառուցել ևս 7 ԳՍԿ՝ երկուսը Գեղարքունիքի մարզում, մեկական՝Կոտայքում և Արագածոտնում, ևս երկուսն՝ Արարատյան հարթավայրում:

Փոխվարչապետն այցելեց նաև Տաշիրի տարածաշրջանում գործող «Դուստր Մելանիա» ընկերություն, ծանոթացավ արտադրության պայմաններին: Ընկերությունը, CARD հիմնադրամի աջակցությամբ, զգալիորեն բարելավել է պանրի որակը. ներկայումս արտադրանքը նաև արտահանվում է, մասնավորապես Ռուսաստան և ԱՄՆ: ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի աջակցությամբ «Դուստր Մելանիա» ընկերությունում հիմնվել է վարպետ պանրագործների դպրոց, որն աջակցում է փոքրամասշտաբ պանիր արտադրողներին՝ուսուցանելով պանրագործության հիմնական տեխնիկան:

Փոխվարչապետն այնուհետև խորհրդակցություն անցկացրեց Լոռու մարզպետարանում՝ մարզպետ Արթուր Նալբանդյանի, մարզի քաղաքային համայնքների ղեկավարների, մարզպետարանի աշխատակազմի, ինչպես նաև Տարածքային կառավարման նախարարության պատասխանատուների մասնակցությամբ:

Ձեռնարկված քայլերի արդյունքում, հատկապես Տաշիրի տարածաշրջանում, գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման դրական դինամիկա է նկատվում, սակայն դեռևս առկա են բնակիչների կողմից չօգտագործվող հողերը շրջանառության մեջ դնելու գործընթացի հետ կապված չլուծված խնդիրներ: Կարևորվեց նաև մարզի որոշ, մասնավորապես՝ Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջաններում, հակակարկտային կայանների տեղադրման հարցը:

Տեղեկություններ ներկայացվեցին նաև մարզի համայնքներում ջրամատակարարման ոլորտում իրականացվող ծրագրերի ընթացքի մասին:

Անդրադարձ կատարվեց մարզում գյուղատնտեսության աջակցության պետական ծրագրերի կատարմանը, մարզի համայնքներում 2013թ. իրականացված վարչական հսկողության արդյունքներին, համայնքային ծառայության ոլորտին վերաբերող և ընթացիկ այլ հարցերի:

1

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

միջին ձեռնարկատիրությունը, ենթակառուցվածքները, կառավարման համակարգը: Երկու ծրագրերի բյուջեն 8 մլն դոլար է: Դեսպանը կարևոր համարեց, որ ծրագրերն իրականացվում են ոչ թե մեկական կազմակերպության, այլ փորձառու և հեղինակավոր կազմակերպությունների դաշինքների կողմից:

Հայաստանի էկոնոմիկայի նախարարի տեղակալ Կարինե Մինասյանը շեշտեց, որ այսօր, ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) իրականացրած ճիշտ քաղաքականության շնորհիվ, հնարավոր է դառնում զարգացման ծրագրերն ուղղել նաև դեպի գյուղական համայնքները: Տիկին Մինասյանը նշեց, որ անցած տարվա գործունեության ընթացքում կենտրոնի տրամադրած շուրջ 17 հազարը (աջակցության 95 տոկոսը) ստացել են մարզային ձեռնարկությունները:

Գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը կարևորեց, որ թե գյուղի, և թե գյուղատնտեսության զարգացումը պետք է դիտարկել միասին: Նա նաև բարձր գնահատեց գյուղի տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերում բազմամյա փորձ ունեցող կազմակերպությունների ներգրավվածությունը:

USAID/PRP ծրագրի ղեկավար Անուշ Ասլանյանի կարծիքով՝ Ծրագրի գլխավոր նպատակն է՝ հզորացնել գյուղական համայնքները՝ բացահայտելով և իրացնելով նրանցից յուրաքանչյուրի թաքնված ներուժը: Ծրագրի ընթացքում՝ ըստ Ասլանյանի,մասնագետները տեղի բնակչության հետ բացահայտելու են համայնքի մրցակցային առավելությունները: Հաջորդ փուլերի ընթացքում, այդ առավելությունների հիման վրա, առաջարկվելու են զարգացման նախաձեռնություններ, իրականացվելու են սկսնակ ձեռներեցների դասընթացներ, տրամադրվելու են մատչելի վարկեր: Ծրագրի մյուս բաղադրիչների գործունեության շրջանակում խթանվելու է կանանց և երիտասարդների ձեռներեցությունը, իրականացվելու են ենթակառուցվածքների արդիականացման և նորերի կառուցման ծրագրեր:

USAID/ARDI ծրագիրն իրականացնող «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» ղեկավար Վահե Սարդարյանը նշեց, որ ծրագիրն աջակցություն է տրամադրելու գյուղատնտեսության երեք հիմնական ոլորտներում՝ կաթի վերամշակում, մրգերի վերամշակում և գյուղական զբոսաշրջություն:

ԱՍՈՒԼԻՍ

ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Օրերս կայացած սեմինար-խորհրդակցության ժամանակ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի ԾԻԳ-ի տնօրեն Ադիբեկ Ղազարյանը նշել է, որ քիչ ջուր օգտագործելու արդյունքում կլավանա իրենց ֆինանսական վիճակը, իսկ քիչ ջրով էլ կկարողանան առավել արդյունավետ գյուղատնտեսություն վարել և ավելի շատ բերք ստանալ, ուստի գյուղացիները պետք է կամաց-կամաց անցնեն նոր տեխնոլոգիաների կիրառմանը:

Անցում կատարելով նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը՝ Ադիբեկ Ղազարյանը հավելեց, որ Հայաստանում ոռոգման կաթիլային եղանակ ներդնելու ուղղությամբ աշխատանքներ տարվում են, սակայն գյուղացիները դեռ ֆինանսապես պատրաստ չեն մտնելու այդ համակարգի բեռի տակ, քանի որ մեկ հեկտար հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգ ներդնելն արժե 3-5 հազար ԱՄՆ դոլար՝ կախված սարքավորումների որակից, սակայն ոռոգման կաթիլային եղանակին անցնելով՝ հնարավոր է տնտեսել ռեսուրսները: Իսկ բերքը, որն արտադրվում է կաթիլային ոռոգման եղանակի կիրառումով, ավելի բարձր է ստացվում:

Կաթիլային ոռոգման հարցերով զբաղվող համաշխարհային ընկերությունների ներկայացուցիչներն արդեն Հայաստանում են, հանդիպում են դաշտերում գտնվող գյուղացիների, խոշոր հողատերերի հետ: Մասնավորապես, մեր երկրում է աշխարհի 115 երկրներում ոռոգման կաթիլային եղանակի ներդրմամբ զբաղվող իսրայելական հայտնի ընկերություններից մեկը:

Հանրապետությունում գործում է ջրօգտագործողների 42 ընկերություն (ՋՕԸ), որոնք սպասարկում են 618 համայնքի շուրջ 130 հազար հեկտար հողատարածք ոռոգող մոտ 200 հազար ջրօգտագործողների: Այդ ընկերություններին ոռոգման ջուր են մատակարարում ոռոգում-ջրառ իրականացնող փակ բաժնետիրական 2 ընկերություններ: Հանրապետության ոռոգման համակարգում ընդգրկված են 2100 կիլոմետր միջտնտեսային և մայր ջրանցքներ, 16 հազար կմ ներտնային ջրանցքներ, 75 ջրամբարներ, 703 խորքային հորեր և 263 ջրհան կայաններ: Հանրապետության շուրջ 208 հազար հեկտար ոռոգելի տարածքներից մոտ 196 հազար հեկտարն ընդգրկված է ՋՕԸ-ների սպասարկման տարածքում:

Մասնագետը հավելեց, որ ինքը շատ երկրներում հանդիպել է ֆերմերների, ովքեր ինքնուրույն են մոնտաժում ոռոգման կաթիլային համակարգերն՝ այդ կերպ նվազեցնելով դրա ծախսատարությունը: ԾԻԳ-ի տնօրենի խոսքով՝ կաթիլային ոռոգման համակարգը հեռանկար ունի, և առաջիկա 2-3 տարիներին զարգացումը տեղի կունենա:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒԿԱՆ ԿԱՅՈՒՆ Է

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանն, անդրադառնալով նախամանորին հավկիթի շուկայում տեղի ունեցած տատանումներին, նշել է, որ 2013թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին օրական 900 000 ձու է արտադրվել, իսկ սպառվել է 800 000 հատ ձու:

Վարչության պետը նշել է, որ հավկիթի պահանջարկի աճ է նկատվել դեկտեմբերի կեսերից սկսած, երբ շուկայում օրական իրացվել է 1.5-2 մլն ձու: Հիմնականում կարողացել են շուկան ապահովել՝ թե ներկրման, և թե տեղի արտադրության հաշվին:

Ա. Հովհաննիսյանը կարևորել է նաև, որ խնդիրներ եղել են միայն դեկտեմբերի 29-30-ի առավոտյան, քանի որ ցուրտ օրեր էին, և մեքենաները չէին կարողանում իրացման կետեր տեղափոխել արտադրանքը, իսկ 31-ին արդեն հավկիթի ապահովվածության հարցը լուծվել է:

Ինչ վերաբերում է մտավախությանը, թե առաջիկայում ձվի խնդիր կլինի, Ա. Հովհաննիսյանը նշեց, որ արդեն թռչնաբուծարաններն ապահովված են անհրաժեշտ քանակի աճան հավերով և անգամ կատարվում է ձվի պահեստավորում, քանի որ արտադրվում է ավելի շատ ձու, քան պահանջարկն է:

ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կառավարության 2012թ. որոշմամբ՝ բուհ ընդունվել ցանկացողները, բացի պահանջված մասնագիտական քննություններից, պետք է տիրապետեն առնվազն մեկ օտար լեզվի, ինչպես նաև ունենան համակարգչային որոշակի գիտելիքներ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2014թ.-ին իր դիմորդների համար ընդունելության նոր կարգ և մեծ արտոնություններ է սահմանել: Հաշվի առնելով վերջին տարիներին ագրարային ոլորտի հետ կապված դժվարությունները՝ համալսարանն անվճար համակարգում սովորել ցանկացող ուսանողներին հնարավորություն է տալիս բուհ ընդունվել՝ միասնական քննություն հանձնելով մրցութային միայն մեկ առարկայից՝ նախկին երկուսի փոխարեն: Կենսաբանական ուղղվածության, տեխնոլոգիական, ինչպես նաև մի շարք մասնագիտությունների դեպքում, ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմորդը կարող է հայտ լրացնել՝ հիմնվելով միջնակարգ կրթության ատեստատի գնահատականների վրա:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանի խոսքով՝ վերջին երեք տարիներին նկատելիորեն պակասել է երիտասարդների հետաքրքրությունն ագրարային մասնագիտությունների նկատմամբ, ինչով և պայմանավորված է դիմորդների թվի նվազումը: 2012թ. համալսարան են ընդունվել՝ առկա ուսուցման համակարգում՝ 960, իսկ հեռակա բաժնում՝ 800 ուսանող: 2013թ. դիմորդների թիվը կտրուկ նվազել է:

Այս փոփոխությունները չեն անդրադառնա պահանջարկ վայելող մասնագիտությունների վրա, մասնավորապես՝ տնտեսագիտական, ճարտարագիտական ֆակուլտետներում համակարգը կմնա նույնը: Նոր փոփոխություններ կլինեն նաև ուսման վարձավճարների հետ կապված: Չնայած այն հանգամանքին, որ ագրարային համալսարանում ուսանողների 65 տոկոսը մարզերից եկած երիտասարդներ են, որոնցից շատերը կարող են ունենալ ֆինանսական դժվարություններ, այնուամենայնիվ, համալսարանում ուսման վարձավճարների աճ կլինի:

Ռեկտորը համոզված է, որ այս նոր փոփոխությունները կնպաստեն, որ ուսանողության մեջ կրկին աճի գյուղատնտեսական մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունը:

Ագրոլրատու
Փետրվար 5, 2014 թ.
Թիվ 1 (2023)

ՀՈԲԵԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԻ 85 - ԱՄՅԱԿԸ

Օրերս լրացավ Հայաստանում մեղվաբուծության վաստակաշատ երախտավոր, կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ալբերտ Համբարձումի Մարկոսյանի ծննդյան 85 և աշխատանքային գործունեության 65 տարին:

Ալբերտ Մարկոսյանը ծնվել է 1929 թվականի հունվարի 28-ին, ՀՀ Արմավիրի մարզի Հայկավան գյուղում, արհեստավորի ընտանիքում: Հայրենի Հայկավան գյուղում աշխատել է կոլտնտեսության մեղվանոցում, ինչը նշանավորում է նրա բեղուն գործունեության սկիզբն ու կոչումը՝ լինել մեղվաբուծության հիմնադիրներից մեկը: Միջնակարգ կրթությունը ստանալուց հետո ընդունվել է Երևանի Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտ: Այն ավարտելուց հետո մեկնել է Մոսկվա՝ սովորելու մեղվաբուծական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում: Պաշտպանելով գիտական թեզը, վերադարձել է Հայաստան և աշխատել բույսերի պաշտպանության գիտահետազոտական ինստիտուտում: 1963 թ. սեպտեմբերի 1-ից աշխատանքի է անցել Հայաստանի անասնաբուծական-անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես մեղվաբուծության բաժնի վարիչ: Նույն թվականին, ՀՀ Մինիստրների Խորհրդի որոշմամբ, Կոտայքի մարզի Առինջ գյուղի պտղատնկարանային սովխոզին պատկանող հողատարածքից 8 հա հատկացվել է Անասնաբուծական-անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտին, որտեղ և ստեղծվել է գյուղատնտեսության նախարարության Մեղվաբուծական գիտահետազոտական կայանը: Կայանը, նրա նվիրյալ ղեկավար Ալբերտ Մարկոսյանի հետևողական, կարգապահ աշխատանքի շնորհիվ, կարճ ժամանակահատվածում, պատշաճ ներկայացվեց Հայաստանի Հանրապետությունում, լայն ճանաչում գտավ ԽՍՀՄ երկրներում: Ալբերտ Մարկոսյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ մեղվաբուծության զարգացումն աննախադեպ հաջողություններ գրանցեց, իսկ դրական արդյունքը երկար սպասեցնել չտվեց. մեղվաբուծական գիտական կայանի աշխատակիցները 1971 թ. ներկայացվեցին Մոսկվայի համաշխարհային մեղվաբուծական «Apimondia»-ում: Գնահատումը չուշացավ. կայանն իր ներկայացրած տաղավարի և գիտական նորարարության համար պարգևատրվեց 6 արծաթյա, 4 բրոնզե մեդալներով և 4 դիպլոմներով:

Մեղվաբուծության նվիրյալն իրեն ավելի պարտավորված զգաց՝ ընդլայնելու մեղվաբուծությունը: 1973 թ. ապրիլին, Մինիստրների Խորհրդի որոշմամբ, ՀՀ Մեղրիի տարածաշրջանի Կարճևան գյուղի հողերից հատկացվեց գիտական կայանին, ուր և հիմնադրվեց Մեղրիի դեղին մեղվի տոհմային մայրաբուծարանը, որը զբաղվում էր տոհմային մայրերի արտադրությամբ: Ալբերտ Մարկոսյանին աջակից են եղել կյանքի ընկերուհին՝ բույսերի պաշտպանության խորագիտակ մասնագետ Ժաննա Մարկոսյանը և դուստրը՝ Սուսաննան: Ա. Մարկոսյանի և Ա. Կոթոդյանի ջանքերի շնորհիվ ՀՊԱՀ-ում, մեղվաբույծների պատրաստման և վերապատրաստման դասընթացներին դասավանդվել է մեղվաբուծություն առարկան: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական թեզեր, հեղինակվել հարյուրավոր գիտական հոդվածներ: Ա. Մարկոսյանի նախաձեռնությամբ նկարահանվել է նաև հայկական մեղվաբուծությանը նվիրված գիտահանրամատչելի ֆիլմ, որն արժանացել է ոսկե մեդալի: 1988 թ. նա տնօրինել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Նեկտար» մեղվաբուծական ՓԲԸ-ն, 2000 թ.-ից աշխատել «Մուլտի Գրուպ» կոնցեռնի մեղվաբուծական ձեռնարկությունում, եղել է «Մուլտի Ագրո» ԳԱ կենտրոնի խորհրդական:

Մեղրիի տոհմային բազայի հետ զուգահեռ, շուրջ 5 տարի ուսումնասիրվեց մեղրատու մշակաբույսերի բազմազանությունը, դրանց բացահայտումը որպես մեղրատու բույս, որից հետո ՀՀ մարզերի համար կատարվեց քարտեզագրություն, որտեղ նշվեց, թե մարզի որ շրջանի, որ գյուղը քանի մեղվաընտանիք կարող է ունենալ: Ներկայումս քարտեզները պահպանվում են Մուլտի Ագրո գիտաարտադրական կենտրոնի արխիվում:

Կրկին ու կրկին շնորհավորում ենք մեր հոբելյարին, մաղթում քաջառողջություն, ուժ և կորով: Թող միշտ արթուն մնա ազնվության, աշխատասիրության և բարության զգացողությունը:

«Մուլտի Ագրո» ԳԱ կենտրոնի գիտական խորհուրդ,
Ֆերմերների ազգային միավորում,
Մեղվաբուծության ասոցիացիա

ԾՐԱԳԻՐ

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և Մննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն (ՍԱՊԾ) ավարտեցին 21 ամսյա արդյունավետ համագործակցությունը ԵՄ պատվիրակության հետ: ԵՄ Թվինինգ ծրագիրը՝ «Հայաստանում կենդանական ծագման սննդամթերքի և անասնակերի անվտանգության վերահսկողության հզորացումը» վերնագրով, ներառված էր ինստիտուցիոնալ զարգացման, օրենսդրական հիմքերի, ռիսկերի գնահատման վրա հիմնված պետական վերահսկողության և ընդհանուր աշխատանքային ընթացակարգերի փոփոխության գործընթացում՝ նախագծելով ՍԱՊԾ-ի աշխատողների համար տեսչական ստուգումները, մոնիթորինգային ծրագրերը, ուսուցման նախագիծը և ծրագիրը: Ինչպես նշեց ՍԱՊԾ արտաքին կապերի բաժնի պետ Դիանա Միրզոյանը, ծրագրի նպատակը ՀՀ Մննդամթերքի անվտանգության պետական ծառայության հզորացումն էր՝ համապատասխանեցնելով կենդանական ծագման սննդամթերքի և անասնակերի անվտանգության համակարգը ԵՄ Սանիտարիայի և Բուսասանիտարիայի, այլ միջազգային ստանդարտներին, օրենսդրությանը՝ դրա կիրառման, ինստիտուցիոնալ կառուցման, ինչպես նաև հանրային իրազեկվածության շրջանակներում:

Նիդեռլանդներ, Դանիա, Լատվիա կատարած ուսումնական այցերի, նաև Հայաստանում կազմակերպված գործնական և տեսական ուսուցումների ընթացքում ծրագրի մասնակիցներին տրամադրվել են անհրաժեշտ գիտելիքներ և փորձ:

Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանում ԵՄ պատվիրակության, Ծրագրերի իրականացման գրասենյակի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Համաշխարհային բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիայի անդամներ, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, CARD-ը:

Ողջունելով ներկաներին՝ ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը շնորհակալություն հայտնեց ծրագրի մասնակիցներին համագործակցության, աջակցության և հանրային իրազեկման համար:

Խոսելով ծրագրի արդյունքների և փորձի փոխանակման մասին՝ ՀՀ Մննդի անվտանգության պետական ծառայության պետ Աբրամ Բախչագուլյանը կարևորեց համագործակցությունը միջազգային գործընկերների հետ՝ նշելով, որ սննդի անվտանգության համակարգի որակի բարձրացումը մեծապես կախված է համակարգի արդյունավետ աշխատանքից:

Անդամ պետության կողմից ծրագրի ղեկավար, Նիդեռլանդների սննդամթերքի և սպառողական արտադրանքի անվտանգության մասնագետ Ժերարդ Ռոեսինկը ներկայացրեց ծրագրի ձեռքբերումների և արդյունքների նկարագիրը: Իսկ Թվինինգի մշտական խորհրդատու Բիրուտա Ամոլինան կարևորեց պարտադիր արդյունքների համար ձեռքբերումները:

Միջոցառման ընթացքում Դանիայի Անասնաբուժության և սննդամթերքի ադմինիստրացիայի գործադիր տնօրենի տեղակալ Անելիս Ֆենգերը, Նիդեռլանդների Մննդամթերքի և սպառողական արտադրանքի անվտանգության մարմնի ներկայացուցիչներ Հերման Վեհկամպն ու Էդգարտ Բրուիները մեկնաբանեցին համագործակցության ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները:

Միջոցառման ավարտին, ծրագրի մասնակիցները եզրակացություններ կատարեցին և ներկայացրեցին վերջնական գնահատականները:

Լիանա Շախնազարյան

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Վերջերս Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) վերսկսել է մարդասիրական օգնության բաշխումը Արմավիրի մարզի կարկտից առավել տուժած 15 համայնքներում:

Արձագանքելով մարզպետ Աշոտ Ղահրամանյանի՝ կարկտից տուժած ընտանիքներին օգնություն ցուցաբերելու խնդրանքին և հետևելով իր մարդասիրական առաքելությանը՝ ՀԿԽԸ-ն ակտիվ գործունեություն սկսեց աղետից տուժած համայնքներին օգնություն տրամադրելու համար: Ստեղծված Աղետներին արագ արձագանքման թիմն իրականացրեց գնահատում, որի արդյունքում հստակեցվեցին վնասների մոտավոր չափերը, անհրաժեշտ օգնության տեսակը և առավել խոցելի խմբերը: Արդյունքում՝ կարկտահարությունից տուժած շուրջ 4000 ընտանիքի բաշխվեցին սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ՝ 250 հազար դոլար ընդհանուր արժողությամբ:

ՀԿԽԸ-ն, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, առաջիկա օրերին 50 հազար դոլար ընդհանուր արժողությամբ հիգիենիկ պարագաների փաթեթներ կբաշխի կարկտահարությունից առավել տուժած 15 համայնքի ծայրահեղ ծանր պայմաններում ապրող շուրջ 1500 ընտանիքի: Օրերս մարդասիրական օգնության բաշխումն իրականացվել է Մրգաշատ, Ալաշկերտ և Արևիկ համայնքներում:

Սահականուշ Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ

ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ

Պարզվում է, որ նոր տեսակի արևային մարտկոցներ են պատրաստվել, որոնցից կառուցված հարթակները նույնքան էներգիա կկուտակեն, քան սիլիցիումից պատրաստվածները, բայց դրանք կլինեն մի քանի անգամ ավելի էժան: Այսպես, մեկ վատտ արևային էներգիան այսօր ունի 75 ԱՄՆ սենթ ինքնարժեք, այն դեպքում, երբ նոր մարտկոցներինը կկազմի ընդամենը 10-20 սենթ: ԱՄՆ էներգետիկայի նախարարության հաշվարկներով՝ 1 վատտի համար 50 սենթն արդեն մրցունակ է դարձնում արևային էներգիան՝ ցանկացած եղանակով ստացված էներգիայի նկատմամբ:

Նոր նյութը, որ պերովսկիտ է կոչվում, հայտնի է մարդկությանն արդեն կես դարից ավելի, սակայն այս բնագավառում փորձարկվում է առաջին անգամ: Նրա 1 միկրոն հաստություն ունեցող շերտը կլանում է այնքան արևային էներգիա, որքան 130 միկրոնանոց սիլիցիումի շերտը, ընդ որում՝ կլանված լույսի 15 %-ը վերափոխվում է կուտակվող էներգիայի, և դա դեռ սահմանը չէ: 2009 թ.-ին կլանման արդյունավետությունը կազմում էր ընդամենը 3,5 %, և մասնագետները գտնում են, որ այժմյան 15-ը մոտ ժամանակներում հասնելու է 20-25-ի, որն ընդամենը մի քանի տարի առաջ անհավանական էր թվում:

Վ Հ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՎՈՐԵՆՔ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

«Դեմոկրատիայի և զարգացման երիտասարդական ակադեմիա» ՀԿ-ի առանցքային նպատակը՝ հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող խնդիրների բարձրաձայնումն ու դրանց լուծման համակարգային ուղիներ առաջարկելն ու հստակ գործելն է: Հասարակական կազմակերպությունը նախապատրաստական աշխատանքներ է կատարում՝ իրականացնելու «Օրգանական գյուղատնտեսության զարգացումը՝ հանրային իրազեկման միջոցով» ծրագիրը:

Ծրագրի ղեկավար Անահիտ Ստեփանյանը նշեց, որ ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ-ում օրգանական սննդամթերքի վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացմանը և օրգանական մթերքների սպառմանն ու օրգանական գյուղատնտեսության զարգացման խթանմանը:

Ըստ Անահիտ Ստեփանյանի՝ ծրագիրը ևս խնդիրներ ունի, որոնք առաջնային են. դրանք են՝ հանրության շրջանում օրգանական սննդի և գյուղատնտեսության գաղափարախոսության ու արդիականության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության առկա իրավիճակի և հեռանկարների ուսումնասիրությունը, օրգանական մթերք արտադրող հայրենական ընկերությունների արտադրանքների քարտեզագրումը և ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության առկա իրավիճակի և հեռանկարների ուսումնասիրությունը: Ծրագրի ղեկավարը կարևորեց ծրագրի անհրաժեշտությունը՝ նշելով, որ օրգանական սննդամթերքի գաղափարախոսության ընկալումն ու կիրառումը կայուն մարդկային զարգացմանը նպաստող քայլեր են:

Մինչ ծրագրի իրականացնելն՝ անհրաժեշտ է նպաստել նաև հայկական օրգանական մթերքների՝ օրեցօր զարգացող գաղափարախոսությանն ու առօրյայում դրա դրսևորմանը, օրգանական մթերքների արտադրության և սերնդի առողջության համար ջանք չխնայող անձանց, ֆերմերային տնտեսությունների և պետական մարմինների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև բնապահպանական իրազեկման մակարդակի ձևավորմանը՝ նպաստելով հանրային առողջ կենսակերպի հայկական տեսակետի կայացմանը:

Անահիտ Ստեփանյանը նշեց, որ ծրագրին նպաստման առաջին քայլերից է եղել նաև www.organicfood.am կայքի ստեղծումը: Վերջերս ստեղծված կայքը հանրավորություն է տալիս օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց ստանալ հետաքրքիր տեղեկություններ, նաև ծանոթանալ գենետիկորեն մոդիֆիկացված կամ ձևափոխված օրգանիզմներին (ԳՄՕ-ները մյուս կենդանի օրգանիզմներից տարբերվում են նրանով, որ արհեստական ճանապարհով փոխվել են դրանց բնական գենետիկական համակարգերը):

Ծրագրի ղեկավարը հավելեց, որ ընթացիկ ծրագրերի մեջ է մտնում օրգանական գյուղատնտեսության գիտահետազոտական կենտրոնի (դպրոց) ստեղծումը, տարածաշրջանային օրգանական մթերք արտադրողների ասոցիացիայի հիմնումն ու նոր հողատարածքների մշակումը օրգանական եղանակով, ինչպես նաև օրգանական դաշտերի հիմնումը: Ծրագրի շրջանակներում տեղեկատվական նյութերի տարածվելուն զուգահեռ, նախատեսվում են լրացուցիչ բացատրական (ուսուցողական խաղերի, ֆիլմերի, հոլովակների տեսքով) աշխատանքներ կատարել՝ դպրոցականների, ուսանողների, երիտասարդների, ակտիվ հասարակական կյանք վարողների շրջանում: Անահիտ Ստեփանյանի համոզմամբ, միջազգային կառույցների, դիվանագիտական առաքելություն իրականացնող ընկերությունների և, պարզապես, ոչ տեղացիների համար, տեղեկատվական աշխատանքները լավագույն մեթոդ են՝ արժեվորելու հայկական օրգանական մթերքները, նպաստելու դրանց սպառմանն ու մշտական կայուն պահանջարկի ձևավորմանը:

Լիանա Շախնազարյան

ԱՆՎՏԱՆԳ ՄՆՈՒՆԴ

ԳՄՕ - Ի ՄԱՍԻՆ՝ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ

Չնայած գենմոդիֆիկացված օրգանիզմների մասին շատ ենք լսում, սակայն մարդկության մեծամասնության մոտ դեռևս հստակ պատկերացում չկա դրանց մասին, քանի որ խնդրի առարկան շատ բարդ է, և կարծիքներն արտահայտվում են ավելի զգացմունքների և անձնական շահերի տեսանկյունից՝ որպես մարդկությանը մոտ ապագայում կործանող կամ նույն մարդկությանը սովից փրկելու միջոց, քան՝ որպես անաչառ և բազմակողմանի հետազոտությունների արդյունք:

Այդ նպատակով էլ՝ շարունակաբար կլուսաբանենք այդ հետաքրքիր թեման՝ տարբեր տեսանկյուններից: Եթե անգամ պարզվի, որ պարզապես գործ ունենք չարիքի հետ, ապա կտեղեկացվի նաև, թե ինչու է այն չարիք: Անգամ, երբ ՄԱԿ-ի նման հեղինակավոր կառույց ներգրավվում է մի ծրագրի մեջ, ուր միջատներն, ամենայն լրջությամբ, ապագա մարդկության համար դիտարկվում են որպես սնունդ, ԳՄՕ-ների հնարավորությունները ևս արժանի են մեծ ուշադրության:

Նախ՝ հետաքրքրական է տեսնել, թե ինչպես են դրան վերաբերվում տարբեր երկրներում: ԱՄՆ-ում տարբեր նահանգներ ունեն իրարից տարբերվող կողմնորոշում: Դրանցից ամենաբացասականը տրամադրված է Կալիֆորնիան, որտեղ 3 նահանգներում ԳՄՕ աճեցնելն ու օգտագործելն արգելված է, սակայն, արդեն երկար ժամանակ է, ինչ նրանց ոգևորությամբ հետևել ցանկացողների առջև դաշնային կառավարությունն արգելքներ է դնում: Ավստրալիայում հաջողվել է դրանք արգելել, սակայն այստեղ էլ, դաշնային կառավարությունը ոչ միայն կասեցրել է հաղթարշավը, որին ոգևորությամբ ցանկացել են միանալ այլ նահանգներ, այլև հետ է վերցրել արտոնված արգելքների զգալի մասը:

Ճապոնացիները ևս կտրականապես դեմ են ԳՄ մշակաբույսերի մշակմանը և սկզբունքորեն չեն մշակում: Սակայն, Կանադայից ներկրվում են ԳՄ հլածուկի հսկայական քանակներ՝ վերամշակման համար, որի հետևանքով, երկրի 6 խոշոր նավահանգիստներից 5-ի շրջապատում և նավահանգստ տանող ճանապարհների շուրջ աճում է Մոնսանտո ընկերության «ցանած» Roundup Ready հլածուկը: Նոր Զելանդիայում ԳՄՕ-ներ չեն մշակվում, իսկ Գերմանիայում արգելված է ԳՄՕ մշակաբույսի՝ եգիպտացորենի ինչպես աճեցումն, այնպես էլ՝ վաճառքը: Իռլանդիայում 2009 թվականից արգելված է ԳՄՕ-ների մշակումը, իսկ դրանք պարունակող մթերքը պարտադիր կերպով պիտակավորվում է:

Չնայած ԳՄՕ կողմնակիցները գտնում են, որ դրա հակառակորդները չափազանց նախապրամադրված են, սակայն, իրենք էլ չեն ժխտում, որ մանրակրկիտ, համակողմանի թեստավորումն անհրաժեշտ է, ինչը ենթադրում է՝ բազմամյա դաշտային փորձարկումներ, մոլեկուլային նկարագրություն, տոքսիկոլոգիական գնահատում, ալերգենային բացահայտումներ, կոմպոզիցիոն վերլուծություններ և այլն: Այդ բոլորը պահանջելու է յուրաքանչյուր օրգանիզմի համար 5-10 տարի ժամանակ և տասնյակ միլիոն դոլարներ:

Կողմնակիցների, որոնց թվին, առաջին հերթին, պատկանում են Կանադան և մի խումբ հարավամերիկյան երկրներ, և հակառակորդների միջև փոփոխական հաջողությամբ պայքար է ընթանում, որը կարելի ամփոփել հակառակորդների գումարային հաղթանակով և, համապատասխանաբար, կողմնակիցների գումարային պարտությամբ: Դեռևս 2007 թվականին, Մթերքի անվտանգության Եվրոպական գործակալությունը (EFSA) «փափուկ բարձ» դրեց սպառողների գլխի տակ՝ պնդելով, որ «բազմաթիվ հետազոտություններով ապացուցված է, որ մոդիֆիկացված բույսերի ԴՆԹ-ն բացակայում է քննության ենթարկված խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, բրոյլերների, լորերի հյուսվածքներում կամ նրանցից ստացված մթերքներում»: Արդեն այն ժամանակ այլ հետազոտողների կողմից առարկություններ եղան, որին EFSA-ն բավական երկիմաստ պատասխան տվեց. «Երբ որ «գերզգայուն» մեթոդներով ենք աշխատում, դրանք մեզ մոտ էլ են նկատվում»: Հետագայում Բրիտանական սննդամթերքի գործակալությունը բարձրաձայն հաստատեց, որ ԳՄ մշակաբույսեր օգտագործած մարդկանց և կենդանիների արյան մեջ հայտնաբերվում են մոդիֆիկացված (ինչպես և չմոդիֆիկացված) օտար ԴՆԹ-ի մեծ՝ կենսաբանորեն ակտիվ հատվածներ, որոնք օրգանիզմի համար կարող են վտանգավոր լինել, հատկապես, երբ դրանց խտությունն արյան մեջ ավելին է, քան սեփական ԴՆԹ-ինը, որը և որոշ դեպքերում նկատվել է՝ որպես ստամոքսում լրիվ չտրոհվելու հետևանք: Այն հատկապես վտանգավոր է հիվանդ՝ մանավանդ աուտոիմունային հիվանդություններով մարդկանց և կենդանիների համար. ԴՆԹ-ն բույսերից, մեծ հավանականությամբ, կենսաբանորեն ակտիվ հատվածներով հայտնվում է՝ այստեղից բխող բոլոր տխուր հետևություններով հանդերձ, ոչ այնքան առողջ սուբյեկտների մոտ, ինչպիսին մարդկության զգալի մասն է:

Վ Հ

Ագրոլրատու
Փետրվար 5, 2014 թ.
Թիվ 1 (2023)

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿՈՎԵՐԻ ՍՏԵՐՋՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ստերջ են համարվում այն կովերը, որոնք տվյալ տարում չեն ծնել: Ստերջության մակարդակը (տոկոսը) հաշվարկվում է հետևյալ կերպ. տարվա սկզբում եղած կովերի գլխաքանակից հանվում է տարվա ընթացքում ծնած կովերի գլխաքանակը, իսկ մնացորդը բաժանվում է տարվա սկզբում եղած կովերի գլխաքանակի վրա: Կովերի ստերջությունը մեծ վնաս է հասցնում անասնատերերին. տվյալ տարում հորթ չի ստացվում, նվազում է տավարի գլխաքանակը, ստերջ կովերից նաև քիչ կաթ է ստացվում, հետևապես՝ պակասում է կաթի ու մսի արտադրությունը: Ստերջության պատճառով ընկնում են նաև նախրի նորոգման հնարավորությունը և ընտրության արդյունավետությունը: Անասնատերերն ավելորդ ծախսեր են կատարում ստերջ կովերի կերակրման, խնամքի, պահպանման, բուժման և անհրաժեշտ այլ միջոցառումների համար: Կովերը ստերջ են մնում տարբեր պատճառներով, որոնք դրսևորվում են տարբեր գործոնների ազդեցության հետևանքով.

1. Ստերջություն՝ կովերին ծնելուց հետո ոչ ժամանակին զուգավորելու /սերմնավորելու/ պատճառով: Որպեսզի ծնելուց հետո կովը ժամանակին հղիանա, անհրաժեշտ է ճիշտ որոշել դրա զուգավորման արդյունավետ պահը:

2. Ստերջություն՝ կովերի անբավարար կերակրման պատճառով: Անբավարար կերակրման դեպքում խանգարվում է օրգանիզմի նյութափոխանակությունը, կովը նիհարում է, վատանում է առողջությունը, խանգարվում սեռական շրջափուլը, չի կատարվում ձվազատում և այլն:

Վերարտադրության բարձր ցուցանիշ ունենալու համար կովերին անհրաժեշտ է կերակրել լիարժեք կերաբաժիններով՝ բոլոր անհրաժեշտ սննդարար նյութերով, հանքային և կենսաբանական տարրերով: Կովին պետք է կերակրել նորմայով սահմանված քանակով և բարձր որակի կերերով (լավ որակի խոտ, սենաժ, սիլոս, արմատապտուղներ, խտացրած կերեր, ինչպես նաև հանքային լրացակերեր և այլն):

3. Ստերջություն՝ կովերի ոչ ճիշտ պահվածքի և խնամքի պատճառով: Կովերի նորմալ խնամքն ու պահվածքը բարերար ազդեցություն են թողնում դրանց վերարտադրական ունակությունների վրա: Կովերին պետք է պահել չոր, լավ օդափոխվող, լուսավոր գոմերում, օդի ջերմաստիճանը պետք է լինի 10-12^{0}C, խոնավությունը՝ շուրջ 70 տոկոս: Ամենօրյա ակտիվ զբոսանքը ծնելուց 4 օր հետո, 3-4 ժամ տևողությամբ, շատ կարևոր միջոցառում է: Ակտիվ է կոչվում այն զբոսանքը, երբ կովերին գոմից քշում են մոտ 2-3 կմ և վերադարձնում: Զբոսանքն ակտիվացնում է բոլոր, այդ թվում՝ սեռական օրգանների գործունեությունը, նաև բեղմնավորման ունակությունը:

4. Ստերջություն՝ հիվանդությունների պատճառով: Կովերի ստերջության պատճառ կարող են դառնալ մի շարք գինեկոլոգիական և այլ հիվանդություններ (բրուցելոզ, վիբրիոզ, տրիխոմոնոզ, լեպտոսպիրոզ, ինֆեկցիոն վագինիտ և այլն): Բոլոր դեպքերում անհրաժեշտ է անասնաբուժական միջամտություն և բուժում:

5. Կովերի ստերջություն՝ վիժումների պատճառով: Կովերի վիժման պատճառ կարող են հանդիսանալ մի շարք վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, ինչպես նաև՝ սպիտակուցներով, վիտամիններով աղքատ կերերով կերակրումը: Հղի կովերին փչացած խոտով, սիլոսով, սառած արմատապտուղներով կերակրելու, սառը ջուր խմեցնելու դեպքում, վերջինները կարող են վիժել: Վիժումների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է հղի կովերին նորմալ կերակրել, խնամել և կազմակերպել հիվանդությունների դեմ բուժում:

6. Ստերջություն՝ ծնի բարդություններով ընթանալու դեպքում: Մի շարք դեպքերում կովերի (մանավանդ առաջին ծնի կովերի) ծինն ընթանում է բարդություններով՝ դժվար են ծնում, ընկերքը ժամանակին չի անջատվում: Եթե ծնելուց հետո ընկերքը 6-8 ժամվա ընթացքում չի անջատվում, ապա պետք է դիմել անասնաբույժին:

7. Ստերջություն՝ կովերի ազատ զուգավորման պատճառով: Հայտնի է, որ կովերի զուգավորումը կատարվում է ազատ, ձեռնաքաշ և արհեստական սերմնավորման եղանակով: Ազատ զուգավորումը հանգեցնում է ցեղի այլասերման, կենդանիների տոհմային արժեքների կորստի: Հետևապես՝ այն չպետք է կիրառվի: Կենդանիների վերարտադրությունը և տոհմային որակը բարելավելու, մթերատվությունը բարձրացնելու համար շատ ավելի արդյունավետ է կովերի արհեստական սերմնավորումը: Սակայն, դրա բացակայության դեպքում, կովերին պետք է զուգավորել ձեռնաքաշ եղանակով, երբ ցուլը պահվում է կովերի նախրից առանձին և օգտագործվում որոշակի ռեժիմով:

8. Ստերջություն՝ անորակ սերմնահեղուկ օգտագործելու պատճառով: Արհեստական սերմնավորման ժամանակ հղիության բարձր արդյունք ստանալու համար շատ կարևոր է սերմնահեղուկի որակը: Դա կախված է բազմաթիվ գործոններից, ինչպես, օրինակ՝ ցուլերի կերակրման, խնամքի, օգտագործման պայմաններից, սերմի ստացման, պահպանման, օգտագործման և շատ այլ հանգամանքներից, որոնք պետք է կարգավորվեն և կատարվեն՝ համաձայն կովերի արհեստական սերմնավորման վերաբերյալ գոյություն ունեցող հանձնարարականների ու հրահանգների:**9. Ստերջություն՝ արհեստական սերմնավորման կանոնների խախտման պատճառով:** Կովերի արհեստական սերմնավորումը բավականին նուրբ գործ է: Այն պետք է կատարվի սերմնավորման տեխնոլոգիային լավ տիրապետող, հմուտ մասնագետների կողմից: Մասնագետները պետք է ունենան անհրաժեշտ գիտելիքներ, որի համար պետք է անցնեն ուսուցման համապատասխան դասընթացներ և պարբերաբար վերապատրաստվեն:

Սերմնավորման տեխնոլոգիայի յուրաքանչյուր խախտում կարող է առաջ բերել կովերի ստերջություն և մեծ վնաս հասցնել անասնատերերին: Հորթատվության բարձր արդյունք ապահովելու համար անհրաժեշտ է ժամանակին ստուգել կովերի հղիությունը: Այն կովերի վերաբերյալ, որոնք ծնելուց հետո մինչև 45-րդ օրը ցանկության չեն եկել կամ մի քանի անգամ (2 և ավելի) զուգավորվել (սերմնավորվել), սակայն չեն հղիացել, պետք է դիմել անասնաբույժին, որպեսզի պարզվեն և վերացվեն անպտղության պատճառները:

Սերմնավորելուց 60 օր հետո այլևս ցանկություն չդրսևոր-

Խաչատուր Սիմոնյան
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԷՏԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Պտղատու ծառերի էտի և ձևավորման աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել պատվաստակալը, տորտը, տնկման խտությունը, մշակության, պարարտացման, ոռոգման, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները: Ծառերը պետք է ձևավորել՝ թողնելով 5-7 ամուր կմախքային ճյուղեր, որը պետք է համապատասխանի պտղատեսակի և տորտի կենսաբանական առանձնահատկություններին և մոտ լինի նրա բնական կառուցվածքին: Ծառերի սաղարթի բնական ձևերի և չափերի վերակառուցումը սկսվում է այգու տնկման առաջին տարվանից և ավարտվում 4-5-րդ տարում:

Ծառերի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները. կենտրոնական ուղեկցողի հետ սուր անկյուն կազմող ճյուղերը էտել՝ պահպանելով ուղեկցողի իշխող դերը: Խորհուրդ է տրվում կիրառել ծառերի ձևավորման հետևյալ եղանակները՝

* ձևավորել նոսր հարկային սաղարթ խնձորենու, տանձենու, ծիրանենու և կեռասենու ծառերի վրա,
* բարելավված բաժակաձև սաղարթ ձևավորել դեղձենու վրա,
* կիսատափակ սաղարթ ձևավորել սալորենու, դեղձենու և խնձորենու թույլաճ ծառերի վրա:

Էտը և ձևավորումը նպատակային այն միջոցառումներն են, որոնք անմիջապես ներգործում են ծառի վրա և հնարավորություն տալիս սննդանյութերի նպատակահարմար բաշխումը ծառի աճող և պտղաբերող օրգանների միջև, ուժեղացնում են երիտասարդ ծառերի աճակալող ճյուղերի և պտղագոյացումների զարգացումը և արագացնում դրանց անցումը ապրանքային բերքատվության շրջան, ակտիվ վիճակում պահպանում ծառերի աճն ու բերքատվությունը: Գոյություն ունեն էտի մի քանի ձևեր՝ շիվերի կարճացում, նոսրացում, սաղարթի իջեցում և երիտասարդացում, որոնք կարող են կիրառվել առանձին և միաժամանակ: Շիվերի կարճացումը լինում է թույլ, միջակ և ուժեղ: Ուժեղ կարճացման դեպքում աճն ուժեղանում է, սակայն տեղի է ունենում բերքի կորուստ: Նոսրացմամբ կարգավորվում է ճյուղերի համաչափ դասավորվածությունը և բարելավվում սաղարթի կենտրոնական մասի լուսավորությունը: Ընդ որում, սնկային հիվանդությունները թույլ են զարգանում, պտուղներն ունենում են բնականոն մեծություն և տորտին համապատասխան գունավորում ու որակ: Էտն, ըստ կատարման ժամկետի, լինում է ձմեռային և ամառային: Ձմեռային էտը կատարում են այն շրջաններում, որտեղ խիստ ցրտեր չեն լինում կամ էտը կատարում են ուժեղ ցրտերից հետո: Ամառային էտի նպատակն է՝ կարճացնել և նոսրացնել կանաչ շիվերն ու հոռաշիվերը: Էտը պետք է կատարել սուր գործիքներով, բողբոջից 1-1.5 սմ վերև, իսկ վերքերին քսել այգու մածիկ՝ խուսափելով բութակներից:

Վերջերս արտադրության մեջ օգտագործվում է շպալերային այգի հասկացությունը, որը կիրառում են ցածրաճ պատվաստակալների վրա աճող պտղատու ծառերի նկատմամբ: Փորձը ցույց է տվել, որ ցածրաճ պատվաստակալների վրա հիմնված տնկարկները տնտեսապես օգտակար են, քանի որ միավոր տարածությունից ավելի արագ և առատ բերք է ստացվում: Այդպիսի այգիներում ծառերը խիտ տնկելիս, սաղարթն ունենում է 2.5-3 մ տրամագիծ, որով և հեշտանում են մշակության ու բերքահավաքի աշխատանքները: Այսպիսի ծառերը պետք է ձևավորել առաջին տարում, տնկին էտել 70-75 սմ բարձրությամբ, որից առաջացած 6-8 շիվերից երկրորդ տարվա գարնանն արդեն հեռացվում են կենտրոնական ուղեկցողը և դեպի վեր ձգվող շիվերը, իսկ մնացած շիվերը կարճեցվում: Այդ տարում ստացվում է առաջին բերքը, իսկ 4-րդ տարում կանոնավորվում է աճն ու պտղաբերումը: 5-6 տարում ստացվում են հավաքված թփաձև, 2-2.2 մ բարձրությամբ և 1.5-2 մ տրամագիծ ունեցող ծառեր: Առանձին ծառատեսակներ պահանջում են յուրահատուկ էտ և ձևավորում:

Խորհուրդ է տալիս մասնագետը

Սերմացուի որակը՝ բարձր բերքի երաշխիք

Գարնանացան մշակաբույսերի սերմացուն պետք է նախապատրաստել և պահեստավորել աշնանը՝ մեծ ուշադրություն դարձնելով սերմերի որակին, քանի որ, նախքան ցանելը, սերմացուն պետք է բավարարի որոշակի որակական նորմերի:

Ցանքի համար նախատեսված սերմը պետք է համապատասխանի տեղական պայմաններին հարմարված այս կամ այն սորտին, ստացվի բարձր բերք տվող դաշտերից, լինի մաքուր, վարակված չլինի հիվանդություններով ու զերծ լինի վնասատուներից, ունենա բարձր ծլունակություն և ծլման էներգիա:

Սերմացուն որակական հատկանիշները ստուգվում են լաբորատորիայում՝ անալիզների միջոցով, որտեղ որոշվում է սերմի մաքրությունը, ցույց է տրվում հիմնական մշակաբույսի մաքուր սերմերի քաշի տոկոսային հարաբերությունն ամբողջ սերմի և թափուկների ընդհանուր քաշի նկատմամբ, սերմանյութի մեջ այս կամ այն թափուկի առկայությունը, նույնիսկ, ծղոտի կտորը, հողի կնձիկը և այլն, որոնք զգալիորեն իջեցնում են սերմանյութի որակը:

Սերմերի խոշորությունը: Սերմերի բարձր որակը բնութագրելիս հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրանց խոշորությանը: Խոշոր սերմերի ծլման էներգիան և ընդհանուր ծլունակությունն ավելի բարձր են, քան մանրերինը: Խոշոր սերմերի ծիլերն աճման ու զարգացման առաջին փուլում ավելի լավ են օգտագործում հողի խոնավությունը և սննդատարրերը, որի շնորհիվ՝ կազմակերպում են համեմատաբար հզոր արմատային համակարգ, իսկ բույսերն աչքի են ընկնում աճելու հզոր ունակությամբ, դրանց թփակալման էներգիան լինում է մեծ, կուտակում են ավելի շատ չոր նյութեր, լավ են դիմանում արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների ազդեցությանը:

Սերմերի տեսակարար կշիռը: Սերմերի ցանքային որակի և բերքատվության վրա, խոշորության հետ մեկտեղ, մեծ չափով ազդում է նաև դրանց տեսակարար կշիռը: Սերմնաբուծության փորձում հայտնի է, որ լիարժեք սերմեր օգտագործելու նպատակով ընտրում են ավելի ծանր, այսինքն՝ ավելի մեծ տեսակարար կշիռ ունեցող սերմեր:

Սերմերի լաբորատոր ծլունակությունը: Ծլման էներգիան ու ծլունակությունը սերմերի ցանքային որակի և դրանց կենսաբանական հատկությունների գլխավոր ցուցանիշներն են: Սերմերի ծլման էներգիան ցույց է տալիս ծլման տեմպը՝ պայմանականորեն ընդունված կարճ ժամանակահատվածում ծլած սերմերի տոկոսը, իսկ ծլունակությունը՝ որոշակի ժամկետի վերջում՝ ծլած սերմերի տոկոսը:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում էական նշանակություն ունի սերմերի ծլման էներգիայի և ծլունակության ցուցանիշերի մեծությունը: Բարձր ծլման էներգիա և ծլունակություն ունեցող սերմերը տալիս են համերաշխ և հավասար ծիլեր: Որքան սերմերը շուտ են ծլում, այնքան շուտ են հողի մակերես դուրս գալիս, որի շնորհիվ ավելի շուտ է սկսվում ֆոտոսինթեզը, բույսերն ավելի շատ սննդանյութեր են կուտակում:

Սերմերի տնտեսական պիտանելիությունը: Սերմի ցանքի նորման՝ ըստ կոնդիցիայի, ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է որոշել դրա տնտեսական պիտանելիությունը, որը ճշտելու համար պետք է ունենալ սերմի մաքրության և ծլունակության տոկոսը: Այդ երկուսի տոկոսներն իրար հետ բազմապատկելով և ստացված արտադրյալը հարյուրի բաժանելով, ստացվում է տնտեսական պիտանելիության տոկոսը:

Այսպիսով, ցանքի համար բարձրորակ սերմեր օգտագործելիս, տնտեսական արդյունավետությունը լինում է բարձր, քանի որ, առանց արտադրական ծախսերը մեծացնելու, բերքատվությունը զգալիորեն բարձրանում է:

Սյունիքի ԳԱՄԿ

Հետաքրքիր է

«Տարվա թռչուն 2014»

Հայտնի է Հայաստանի «Տարվա թռչուն 2014»-ի անունը: Որպես 2014 թվականը խորհրդանշող թռչնատեսակ՝ ընտրվել է Հոպոպը:

«Հայաստանի թռչունների պահպանման միությունը» «Տարվա թռչուն» կրթական ծրագրի բաց քվեարկությունը հայտարարել էր դեռ 2013 թ. հոկտեմբերին:

Այս նախաձեռնության նպատակն է՝ ընտրել տվյալ տարին խորհրդանշող թռչնատեսակը և Հայաստանի բնակչության ուշադրությունը սևեռել թռչունների և դրանց բնադրավայրերի պահպանման խնդիրներին: Ծրագիրն անցկացվում է սկսած 2009 թ.-ից:

«Տարվա Թռչուն 2014»-ի թեկնածու թռչուններն էին՝ Սև անգղը, Հոպոպը, Ամուրիկը, Սովորական կիվիվը, Սովորական հողմավար բազեն, Երկնագույն ալկիոնը, Սև ագռավը, Եվրոպական բվիկը, Սև կեռնեխը և Կարմրակտուց սուզաբադը: Հարցմանը մասնակցել է Երևանից և ՀՀ տարբեր մարզերից 1592 հոգի: Հաղթող է ճանաչվել Հոպոպը՝ 313 ձայնով:

Հոպոպը գրեթե փատրակի մեծության, վառ գույնի թռչուն է, երկար, նեղ, բարակ, դեպի ցած ծռված կտուցով և փումփուլանման, լավ զարգացած հովհարաձև կատարով, որը, երբեմն, բացվում է հովհարի պես: Ձանգվածը՝ 68-72 գ, թևերի բացվածքը՝ 42-49 սմ:

Գունավորումը շիկակարմրավուն է, սև և սպիտակ շերտերով: Հոպոպը լայնորեն տարածված է Եվրոպայի և Ասիայի հարավային ու կենտրոնական շրջաններում: Սովորաբար նախընտրում է բնակվել նոսր թփերով կամ ծառերով պատված բաց տարածություններում, ինչպես օրինակ՝ մարգագետինները կամ արոտավայրերն են, սակայն մեծ քանակությամբ տարածված է նաև պուրակներում և մրգատու այգիներում: Հոպոպը վերադառնում է Հայաստան մարտ- ապրիլ ամիսներին:

Թռչնաբուծություն

Ակնկալում են փոքր բիզնեսի աշխուժացում

«Հայաստանում էկզոտիկ թռչնաբուծության ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորումն ու խնդիրների լուծումը կհանգեցնի մեծ թվով մարդկանց փոքր բիզնեսի զարգացմանը: Եթե ՀՀ-ում այդ ոլորտի հարցերը լուծվեն, ապա դա կարող է փոքր բիզնեսի ասպարեզում բավական թվով մարդկանց խնդիրներ լուծել»,- տեղեկացրել է «Էկզոտիկ թռչուններ բուծողների և տիրապետողների հայկական միավորում» ՀԿ-ի նախագահ Բագրատ Հարությունյանը:

Նրա խոսքով՝ հանրապետությունում, մասնավորապես, չկա օրենքի պահանջ, որը կստիպի թութակ վաճառողներին թռչնի ծագման վերաբերյալ տրամադրել փաստաթուղթ: Խնդիրներ են առաջանում նաև արտահանման գործընթացի ժամանակ:

Հարությունյանի գնահատականով՝ Հայաստանում էկզոտիկ թռչնաբուծությամբ են զբաղվում մոտ 150 անհատներ, ովքեր մեծ և միջին չափերի հավաքածուներ ունեն:

ՀԿ-ի նախագահի կարծիքով՝ էկզոտիկ թռչունների բազմացման ավանդույթը մեր երկրում բավականին հին է: Խորհրդային տարիներին մեզ մոտ, նույնիսկ, անցկացվել է էկզոտիկ թռչունների խոշոր համամիութենական ցուցահանդես:

Ներկայումս, այդ ոլորտը կարգավորելու համար, ՀԿ-ն զբաղվում է թռչունների օղակավորման աշխատանքներով: Օղակին գրված է թռչնի ծննդյան տարեթիվը, թռչնի ծննդավայր պետության կրճատ անվանումը, ակումբի անունը, որին հարում է բուծողը, վերջինիս անձնական կոդը և օղակի հերթական համարը: Օղակն ապացուցում է, որ թռչունը ծնվել է անազատ պայմաններում:

Բ. Հարությունյանը նշել է, որ թռչուններին օղակավորելու աշխատանքները շարունակվում են, և ներկրվել է օղակների հերթական խմբաքանակը: Օղակների այս տարվա գույնը կանաչն է: Մասնագետը հավելել է, որ նախկինում գոյություն է ունեցել թռչնասերների «Արագիլ» ակումբ, որը դասախոսություններ և ցուցահանդեսներ է կազմակերպել. արդյունքում՝ ակումբային կյանքն այդ ոլորտում ակտիվ է եղել:



Գարնանն ընդառաջ

Այգու տեղի ընտրությունն ու հողի նախապատրաստումը տնկման համար

Առանձին պտղատեսակների համար տեղի ճիշտ ընտրությունն ապագա այգու բնականոն և բարձր բերքատվության բախտորոշ գործոններից մեկն է: Տեղանքի ընտրության և այգու հիմնման ժամանակ թույլ տրված սխալները հետագայում գործնականում հնարավոր չէ ուղղել, քանի որ այն կապված է լինում մեծ դժվարությունների ու ծախսերի հետ:

Դրա համար նախ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ կլիմայական պայմանները, բարձրությունը ծովի մակերևույթից, ռելիեֆն ու դիրքը, հողի մեխանիկական կազմն ու քիմիական բաղադրությունը, ոռոգման ջրի առկայությունը: Այգու տնկման համար ընտրված հողամասը պետք է պաշտպանված լինի քամիների ուժեղ հոսանքներից:

Մեր հանրապետության պայմաններում հնարավոր չէ լիարժեք այգի ունենալ՝ առանց արհեստական ոռոգման: Նախքան այգի հիմնելն անհրաժեշտ է հուսալիորեն լուծել ոռոգման ջրի հարցը և, միայն վերջինիս ապահովվածության դեպքում, կատարել ծառատնկումները: Շատ կարևոր է նկատի ունենալ նաև հողի բնական ջրաթափանցելիությունն ու ջրապահունակությունը: Որպես կանոն՝ թեքության վերին մասն ավելի չորային է լինում, քան ստորոտի հողը:

Պտղատու ծառերի բնականոն աճի և բերքատվության համար, բացի հողի որակից, վճռական նշանակություն ունեն, մեխանիկական ու քիմիական կազմը, աղերի ու կրային մասի քանակությունը, օրգանական նյութերի պարունակությունը:

Հայաստանի հողերը հիմնականում չեզոք և հիմնային են, որոնց նկատմամբ ևս տարբեր պտղատեսակներ, տարբեր պահանջներ են ներկայացնում: Օրինակ՝ հիմնային հողերում խնձորենին ուժեղ հիվանդանում է քլորոզով, տանձենին՝ ավելի թույլ: Մեր հանրապետությունում մշակվող պտղատու ծառերը լավ են աճում և բարձր արդյունք են տալիս, եթե այգին հիմնվում է օրգանական նյութերով հարուստ հողատարածքներում:

Երբեմն հողամասերում հանդիպում են ուժեղ կարբոնատային հողակտորներ, որոնք պետք է մշակել ոչ թե սովորական հիմնաշրջող գութաններով, այլ ուժեղ փխրեցուցիչներով, որպեսզի ներքևի կարբոնատային անբերրի շերտը միանգամից վերև չհանվի: Արարատյան հարթավայրի ոռոգելի հողերում, որոնք զերծ են քարերից ու կարծրացած շերտից, կարելի է մեկ անգամ կատարել խոր վար՝ միաժամանակ պարարտացնելով օրգանահանքային պարարտանյութերով:

Հողակտորը վարելուց հետո, անհրաժեշտ է լավ հարթեցնել, որպեսզի հետագայում համաչափ ջրվեն այգու բոլոր մասերը, նաև արդյունավետությամբ կատարվեն այգու խնամքի աշխատանքները: Այգի հիմնելու համար խոր վարն աշնանային տնկումների դեպքում, պետք է կատարել երկու-երեք ամիս առաջ, իսկ գարնանայինի դեպքում՝ նախորդ աշնանը:

Միայն վերը նշված միջոցառումների լիակատար կիրառման շնորհիվ է, որ բարենպաստ պայմաններ կստեղծվեն պտղատու ծառերի հաջող զարգացման համար, կապահովվի բարձր կպչողականություն, կստեղծվի լիարժեք այգի:

Ագրոլրատու
Փետրվար 5, 2014 թ.
թիվ 1 (2023)

Խորհուրդներ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՋԵՐՄԱՏՆԵՐՈՒՄ

Փակ գրունտում բանջարանոցային մշակաբույսերից բարձր բերք ստանալու գործում կարևոր նշանակություն ունի նախապատրաստական աշխատանքների ճիշտ և ժամանակին կատարումը:

Մինչ վեգետացիայի սկսվելը, պետք է ավարտված լինեն ջերմատնային բոլոր տիպի կառույցների վերանորոգման և գրունտի ախտահանման աշխատանքները:

Հատկապես ծմռանը կարևոր նշանակություն ունի ապակիների մաքրությունը: Ոչ մաքուր ապակիներն ավելի քան 40-50 տոկոսով նվազեցնում են լույսի պայծառությունը, որը բացասաբար է ազդում բույսի աճման և զարգացման վրա, իջեցնում հիվանդությունների նկատմամբ բույսերի դիմադրողականությունը, բերքատվությունը և որակական ցուցանիշները:

Հողախառնուրդի պատրաստումը

Ծածկած գրունտի պայմաններում կարևոր նշանակություն ունի մշակաբույսերի սննդային ռեժիմի կարգավորումը: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել հողախառնուրդների ընտրության և օգտագործման վրա, այն հաշվով, որ բույսերն ապահովվեն սննդով, բարենպաստ պայմաններ ստեղծվեն դրանց արմատային համակարգի բնականոն աճի ու զարգացման համար:

Ջերմատներում բույսերն աճեցվում են նախապես պատրաստված հողախառնուրդում, որը պետք է ունենա համապատասխան ֆիզիկոքիմիական կազմ, օժտված լինի բարձր կլանողականությամբ, օդաթափանցիկությամբ, խոնավունակությամբ, միևնույն ժամանակ պարունակի բույսերի համար բավարար քանակությամբ մատչելի սննդանյութեր: Ուստի հողախառնուրդն անհրաժեշտ է ամեն տարի թարմացնել:

Ջերմատան հողախառնուրդը պատրաստվում է հետևյալ բաղադրամասերից՝ հող, տորֆ և ավազ: Քանակական հարաբերությունները պայմանական են և կախված են տեղի պայմաններից, տնտեսության հնարավորություններից, մշակաբույսի առանձնահատկություններից:

Պարզվել է, որ բարձր ֆիզիկոքիմիական հատկություններով օժտված հողախառնուրդ պատրաստելու համար հարկավոր է վերցնել 50 տոկոս տորֆ, 30 տոկոս ճմահող, 20 տոկոս բուսահող և 1 մ³ զանգվածին ավելացնել 3-10 մմ մեծությամբ՝ 0.4 մ³ հրաբխային խարամ կամ պերլիտ: Վերջիններս բարձրացնում են հողախառնուրդի օդաթափանցիկությունն ու կլանող ունակությունը, երկարացնում գրունտի օգտագործման ժամանակահատվածը: Տորֆը նույնպես ունի մեծ կլանողական հատկություն, ուստի, պարարտանյութերի մեծ չափաքանակների ներմուծման ժամանակ հողային լուծույթի խտության բարձրացման վտանգ չի առաջանում:

Հողախառնուրդի պատրաստման ժամանակ բաղադրամասերի ճիշտ ընտրությունը, ջրաթափանց ենթահողային շերտի առկայությունը, մշակվող մշակաբույսերի սնման համակարգի ճիշտ օգտագործումը, գրունտի պարբերաբար թարմացումը հնարավորություն են տալիս երկարացնել հողախառնուրդի օգտագործման ժամանակաշրջանը:

Գրունտի ախտահանումը

Բանջարանոցային մշակաբույսերի երկարատև վեգետացիոն շրջանը, օդի բարձր ջերմությունն ու խոնավությունը նպաստում են սնկային, բակտերիալ և վիրուսային հիվանդությունների հարուցիչների, ինչպես նաև վտանգավոր վնասատուի՝ գալլային նեմատոդի զանգվածային զարգացմանը:

Ջերմատնային պայմաններում մշակվող բույսերը հիվանդություններից և վնասատուներից զերծ պահելու և բերքատվությունը բարձրացնելու համար, նախքան ցանքի և սածիլման աշխատանքներն սկսելը, կարևոր պայմաններից է ախտահանման աշխատանքների կիրառումը:

Անհրաժեշտ է ջերմատնից հեռացնել բուսական մնացորդները, հողը վարել 30 սմ խորությամբ: Ջերմատան պատերը, դռները, ապակիները, ճանապարհները, գույքը, նաև շրջակայքն ախտահանել 5-10% ֆորմալինի լուծույթով:

Ոստայնատզի ձմեռող ձվերը, լվիճները, ջերմատնային սպիտակաթևը ոչնչացնելու նպատակով՝ սրսկել հետևյալ բուժանյութերի լուծույթներից որևէ մեկով՝ Ակարին խէ (2գ/լ), Ակտելիկ խէ 500գ/լ), Տալստար խէ (100գ/լ):

Ջերմատնային գույքը կարելի է ախտահանել կալիումի պերմանգանատի 5% լուծույթով: Ախտահանվող մասերն առատորեն սրսկել և լավ թրջել լուծույթով:

Ախտահանման արդյունավետ եղանակ է համարվում նաև ջերմատների ծխեցումը ծծմբի գազով: Նախքան ծծմբի այրումը, ջերմատան պատուհանները, դռներն ու ճեղքերը պետք է հերմետիկ փակել: Երկու օր հետո տարածքն օդափոխել: Հողի ախտահանման արդյունավետ եղանակը՝ գոլորշիով ախտահանումն է (շոգեհարման միջոցով):

Ախտահանման այս եղանակը կիրառելու համար հողը պետք է նախօրոք վարել, այնուհետև ծածկել ջերմադիմացկուն հատուկ պոլիէթիլենային թաղանթով, որ ունենում է 3.6մ լայնություն և 40մ երկարություն: Թաղանթի եզրերին դնում են ավազով լցված պարկերը, իսկ գոլորշին, կաթսայատներից՝ Է-1 տիպի հատուկ խողովակներով, 2.5-3 մթն. ճնշման ազդեցության տակ, մտնում է ջերմատուն: Խողովակաշարն ունի մանր անցքեր, որոնցով գոլորշին հողին է տրվում այնքան ժամանակ, մինչև 30 սմ խորությունում հողի ջերմաստիճանը հասնում է 85 °C-ի: Այս ռեժիմը պահպանվում է մինչև 1 ժամ, իսկ ընդհանուր գործընթացը տևում է 8-9 ժամ, որը կախված է հողի կառուցվածքից, խոնավությունից, հերմետիկ փակվելուց, կաթսայատան անխափան աշխատանքից: Հողի հնարավորինս չոր լինելը նպաստում է վառելանյութի խնայմանը: Անհրաժեշտ է այս մեթոդով շոգեհարել ջերմատան ամբողջ գրունտը:

Հողը գոլորշիով ախտահանելուց հետո պետք է ջրախեղդ անել՝ մաքրելու համար ավելորդ աղերից: Վերջինիս տևողությունը կախված է ջրի որկից:

Այն ջերմատնային տնտեսությունները, որոնք հնարավորություն չունեն գրունտը գոլորշիով ախտահանելու, պետք է այն իրագործեն քիմիական նյութերով կամ գոլորշի արտադրող հատուկ Դ-721 մեքենայով:

Ախտահանիչ պատրաստուկներից արդյունավետ է վիդատը (օկսամիլ) (100գ/ք.մ): Մինչև սածիլումը կամ ցանքը, վիտադի հատիկները մեքենայի օգնությամբ ցրում են հողի մակերեսին, այնուհետև 5սմ խորությամբ մտցնում հողի մեջ, և 20 օր հետո սկսում սածիլման աշխատանքները:

Պատրաստուկի մնացորդները հեռացնելու նպատակով՝ արգելվում է այդ շրջանում տաքացնել հողը: Սածիլումից 10 օր առաջ, օգտագործված պատրաստուկների վերացման համար, հողը փխրեցնում են ու ջրում: Քիմիական ախտահանման ժամանակ պետք է խստորեն պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները: Պատրաստուկների հետ աշխատող անձինք պարտադիր պետք է կրեն կոմբինիզոն կամ խալաթ, գլուխներն ու ձեռքերը ծածկեն, օգտագործեն շնչադիմակներ:

Ոչ պակաս արդյունավետ է նաև հողի ախտահանումը սև, սինթետիկ թաղանթների օգնությամբ: Այս դեպքում հողը վարվում է 30 սմ խորությամբ, ջրվում և անմիջապես հերմետիկ ծածկվում սև թաղանթով՝ 15-20 օր, որից հետո բացում են և նորից վարում: Պետք է նշել, որ այս ախտահանումը նպատակահարմար է ամռան ամիսներին, երբ ջերմատան ջերմաստիճանը շատ բարձր է: Նման ախտահանումը նվազեցնում է մոլախոտերի սերմերի ծլման էներգիան, ինչպես նաև սնկային և վիրուսային հիվանդությունները:

Ներկայումս փակ գրունտում մշակաբույսերի ոռոգումը և սնուցումը կատարվում են հիմնականում կաթիլային եղանակով: Ուստի, բույսերի սածիլումից առաջ, պետք է անցկացվի այդ խողովակաշարը (բույսերի շարքին համապատասխան՝ և փորձարկվի, որպեսզի ապահովվի դրա անխափան աշխատանքը:

Ուսումնական

ԴՊՐՈՑԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության համակարգը մշտապես գործել և զարգացել է հասարակական միջավայրում: Այդ առումով կարևոր է այն հանգամանքը, որ կրթությունը համաքայլ ընթանա ժամանակի փոփոխությունների հետ:

Մեր օրերում աշակերտներին դասապրոցեսի մեջ ընդգրկելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է անմիջական կապ ստեղծել ուսումնասիրվող առարկայի և աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման միջև:

Դպրոցում, օրինակ, քիմիա առարկայի դասավանդման տարբեր թեմաներ սերտորեն կապվում են գյուղատնտեսության հետ, որը զբաղված է կենսականորեն անհրաժեշտ նյութերի՝ սննդի արտադրությամբ: Կարևոր նշանակություն ունի հողի բերրիությունը և բերքի վերամշակման հիմնախնդիրը: Քիմիկոսների առջև խնդիրներ են դրվում՝ ստեղծել նոր, պարզ և համալիր պարարտանյութեր, բույսերի հիվանդությունների և դրանց վնասատուների դեմ ժամանակակից պայքարի նոր միջոցներ: Այս առումով, այն դասաժամերին, որոնց ընթացքում ուսումնասիրվում են նշված հարցերի հետ կապ ունեցող թեմաներ, կազմակերպվում է աշակերտների նպատակային ուսուցում, որով ընդգծվում է գիտելիքի կապը արտադրության տարբեր ճյուղերի հետ: Մասնավորապես՝ «Հանքային պարարտանյութեր» թեման ուսումնասիրելիս ուշադրության են արժանանում այն հարցերը, որոնք վերաբերում են պարարտանյութերում սննդարար տարրի տոկոսային բաղադրության որոշմանը, նրանց հատկություններին, ստացման եղանակներին, պահպանությանը, ճիշտ չափաքանակներով օգտագործմանը: Կատարվում են համեմատություններ հանքային և օրգանական պարարտանյութերի միջև, գտնում նրանց օգտակար և վնասակար կողմերը:

Հատուկ ուշադրության են արժանանում նաև թունաքիմիկատների կիրառման խնդիրները, որոնց օգտագործման ընթացքում խիստ անհրաժեշտ է չափաքանակի պահպանումը և անվտանգության կանոնների իմացությունը: Կալցիում և մագնեզիում մետաղների միացություններն ուսումնասիրելիս ուշադրություն է դարձվում թթու և հիմնային հողերի որակի բարձրացման, նրանց բերրիության ապահովման նպատակով այդպիսի հողերի մեջ կրաքարի և գիպսի փոշիների ավելացումը:

Մագնեզիումը կարևոր կենսատարր է, որը մտնում է քլորոֆիլի բաղադրության մեջ և մասնակցում ֆոտոսինթեզի գործընթացին, որի կենսական կարևորությունը հասանելի է դառնում յուրաքանչյուր աշակերտի: Նշված թեմաների ուսումնասիրությունից հետո կազմակերպվում են բաց դասեր, որոնք անցնում են բուռն քննարկումներով և բանավեճերով: Աշակերտներին հանձնարարվում է գրել զեկուցումներ, ռեֆերատներ՝ «Բույսերը և օդի մաքրությունը», «Բույսերի և Արեգակի կապը, որպես կյանքի գոյության ձև», «Բույսերը որպես կարևորագույն հումք քիմիական արդյունաբերության համար», «Բույսերի պահպանության խնդիրները» և այլ թեմաներ: Կատարվում են նաև գործնական աշխատանքներ, որոնց աշակերտները մասնակցում են մեծ ոգևորությամբ:

Այս ամենը պայմանավորված է աշակերտների հետաքրքրությունների զարգացման և արտադրության տարբեր ոլորտների գործընթացների իմացության մեջ խորանալու ցանկությամբ:

Արագածոտնի ԳԱՄԿ

ԱՌՈՂՋԱՐԱՐ Է...

Վաղ գարնանային բանջարեղեններ

Գարնանը բոլորին անհանգստացնում է վիտամինային անբավարարության նկատմամբ մտավախությունը, որի պատճառով մարդիկ շտապում են դեղատուն՝ գնելու վիտամինների ու հանքային նյութերի հերթական հաբերը:

Վաղուց ժամանակն է անցնելու գարնանային մթերքներով ճաշացանկի: Գարնանը մեր օրգանիզմը փոփոխությունների կարիք ունի. պետք չէ նրան առաջարկել այն, ինչ մեկ ամիս առաջ: Սննդակարգաբանները խորհուրդ են տալիս հանել ճաշացանկից այն ամենն, ինչի կարիքն օրգանիզմն ունի հատկապես ձմռանը: Օրինակ, ամեն տեսակ խավարտների փոխարեն, օգտագործեք ավելի շատ բանջարեղենով աղցաններ:

Գարնանն առավել առողջարար է ծանր կերակուրներից հրաժարվելը: Հնարավորինս քչացրեք յուղոտ մսեղենի, կենդանական յուղի ու շաքարի քանակությունը ճաշացանկում: Օգտագործեք ցածր յուղայնությամբ կաթնամթերք. այն նաեւ օրգանիզմը մաքրող հատկություն ունի: Աշխատեք ավելի քիչ օգտագործել նաև տարաբնույթ աղեր, կծու և թթու համեմունքներ: Դրանք փոխարինեք թարմ կանաչեղենով:

Պետք է խուսափել այն մրգերից ու բանջարեղեններից, որոնք կարող են ալերգիկ ռեակցիաներ առաջացնել. գարունը ռիսկային սեզոն է: Խորհուրդ է տրվում օգտագործել Ձեր բնակավայրին բնորոշ մրգեր և բանջարեղեն, այսինքն՝ տեղական, այն նվազեցնում է ալերգիկ ռեակցիաների ռիսկը:

Օրգանիզմի համար խիստ կարևոր վիտամինների և միկրոտարրերի պահանջը կարելի է լրացնել բնության բարիքների՝ վաղ գարնանային թարմ, էկոլոգիապես մաքուր ուտելի խոտաբույսերի, բանջարեղենի, մրգերի միջոցով: Վաղ գարնանային տերևային բանջարեղեններից՝ թարխունի, կոտեմի, հազարի, կանաչ սոխի օգտակարության մասին ներկայացնում ենք ստորև:

Կանաչ սոխ

Գիտնականները սոխի հայրենիքը համարում են Իրանը և Աֆղանստանը: Կանաչ սոխը (կամ այլ կերպ՝ աղցանային սոխ) աճեցրել են դեռևս հազարամյակներ առաջ: Սոխի բուժիչ հատկությունների մասին գիտեին շատ ազգեր. հին հոռոմեացիները նույնիսկ համարում էին, որ սոխը զինվորներին ուժ և կորով է տալիս, այդ իսկ պատճառով էլ այն ընդգրկում էին նրանց սննդակարգի մեջ:

Կանաչ սոխը պարունակում է 93 % ջուր, 1.3 % սպիտակուցներ, 4.7 % ածխաջրեր, 0.8 % բջջանյութ, 0.6 % պեկտիններ, 0.2 % օրգանական թթուներ, գլիկոզիդներ, եթերային յուղ. վերջինս պարունակում է ծծմբային միացություններ, որով և պայմանավորված է սոխի յուրահատուկ հոտը, կծու համը: Կանաչ սոխը չափազանց հարուստ է հանքային տարրերով (հատկապես՝ K, Ca, Mg, Na, P, Fe, Co, Mn, Cu, Zn, Mb), կարոտիններով (մինչև 2 մգ% կարոտին), B_2, PP, C (30 մգ%) վիտամիններով:

Գիտնականները նկատել են, որ ջերմատների աշխատողները, որոնք զբաղվում են կանաչ սոխի մշակմամբ, գրեթե չեն հիվանդանում վարակիչ, մրսածության հետ կապված հիվանդություններով:

Վիտամին C-ն պահպանելու նպատակով ցանկալի է կանաչ սոխը մատուցել առանց կտրատելու և առանց ջերմային մշակման: Իսկ վաղ գարնանը, այդ վիտամինի նկատմամբ օրգանիզմի պահանջը բավարարելու նպատակով, բավական է օրվա ընթացքում ուտել 100-150 գ կանաչ սոխ: Սոխի մեջ կան նաև զգալի քանակությամբ ֆիտոնցիդներ, որոնք նպաստում են ախտածին միկրոօրգանիզմների ոչնչացմանը:

Ամենօրյա սննդակարգում թարմ կանաչ սոխի օգտագործումը նպաստում է օրգանիզմում աղաջրային փոխանակության կանոնավորմանը: Գիտական ժամանակակից բուսաբուժության մեջ սոխի պատրաստուկները հաջողությամբ օգտագործվում են վիտամինային անբավարարության, վերին շնչուղիների և աղիների հիվանդությունների ժամանակ:

Կոտեմ

Որպես սննդային և դեղագործական նշանակության բույս՝ կոտեմը հայտնի է եղել դեռևս Հին Եգիպտոսում, Հունաստանում, Հռոմում: Բույսի սերմերից և տերևներից պատրաստված քսուքը՝ ճարպի հետ միասին, օգտագործվել է ալերգիաների, քոսի, ինչպես նաև վերքերի բուժման նպատակով: Կոտեմը նպաստում է մարսողությանը, ախորժակի լավացմանը, արյան ճնշման կարգավորմանը:

Թարմ տերևները հարուստ են հանքային նյութերով՝ K, Ca, P, Mg, Cu և այլն: Պարունակում է C, B խմբի վիտամիններ, կարոտիններ, ռուտին, ռիբոֆլավին, մանանեխի եթերային յուղ, դալար ընձյուղները և թարմ տերևներն ունեն բողկ և ծովաբողկ հիշեցնող բարկ, դառը, կծու համ:

Թարխուն

Մսնդի մեջ օգտագործում են թարխունի երիտասարդ ցողունն ու տերևները, որոնք հավաքում են մինչև բույսի ծաղկելը: Օգտագործում են ինչպես թարմ, այնպես էլ չորացրած վիճակում: Թարխունը լայնորեն օգտագործվում է արաբական և կովկասյան խոհանոցներում: Այսպես, օրինակ՝ հայերը գտնում են, որ ձկնեղենն առանց թարխունի դժվար է պատկերացնել: Թարխունի եթերայուղից ստացվող քացախն օգտագործում են պահածոների մեջ, մսից, ձկից, բանջարեղենից, պանրից պատրաստվող ուտեստներում: Թարխունն օգտակար է նաև զովացուցիչ ըմպելիքների և լիկյորների պատրաստման համար:

Թարխունն ունի ախորժաբեր, հակաճիճվային, թեթև միզամուղ և անոթներն ամրացնող, մարսողությունը բարելավող և ստամոքսահյութի արտադրությունը խթանող հատկություն:

Հազար

Աճեցրել են հին հույները, հռոմեացիները, եգիպտացիները, որտեղից էլ այն տարածվել է այլ երկրներում: Հայտնի են հազարի շատ տեսակներ, որոնք նույնիսկ տարբերվում են ձևով, չափով և տերևների գույնով: Հազարի տերևները պարունակում են մեծ քանակությամբ C վիտամին և կարոտիններ: Ընդ որում, ստորին տերևներում C վիտամինն ավելին է, քան արտաքին տերևներում, իսկ կարոտինի քանակը՝ ընդհակառակն, արտաքին տերևներում 30 անգամ ավելի շատ է, հետևաբար, սննդի մեջ պետք է օգտագործել նաև արտաքին կանաչ տերևները:

Ունենալով նման քիմիական կազմ՝ հազարի կալորիականությունն այնուամենայնիվ ցածր է: Որպես բջջանյութի լավագույն աղբյուր, հազարը խորհուրդ է տրվում մարսողական խանգարումների, շաքարային դիաբետի, ճարպակալման և աթերոսկլերոզի ժամանակ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Ույծ գյուղում վաճառվում է 6100 ք/մ տարածք:

Տարածքում առկա են հետևյալ շինությունները՝ 644 ք/մ քոչնանոց, 840 ք/մ խոտի հարմարեցված պահեստ, ստացիոնար կշեռք /15 տոննա/, երկհարկանի, վերանորոգված վարչական շենք՝ 400 ք/մ: Տարածքը գազաֆիկացված է, ունի եռաֆազ հոսանք և մշտական ջուր:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել /091/ 411 229 հեռախոսահամարով:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի 2014թ. բաժանորդագրությունը

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվա՝ 1980 դրամ
1 եռամսյակը՝ 120 դրամ

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվա՝ 4050 դրամ
1 եռամսյակը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության տեղեկատվության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Գրիս-Ապարանչ» կոլեկտիվ ընկերությունները:

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երեւան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝ ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Լիանա Շախնազարյան

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 4
ստորագրված է տպագրության 04.02.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երեւան, Մամիկոնյանց 39ա